# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 48

«23» օտ 2020թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 45 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դատախազության մասին» օրենքի 38.1 հոդվածի 1-ին մասը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ ու 7-րդ կետերով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 31-ի N 24 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 45 հրամանով հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) 3-րդ կետում «աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի» բառերը փոխարինել «անձնակազմի կառավարման վարչություն (այսուհետ՝ անձնակազմի կառավարման վարչություն)» բառերով,

2) 4-րդ կետի 1-ին ենթակետում «բաց և փակ մրցույթներին,» բառերից հետո ավելացնել ««Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և այդ ոլորտը

համակարգող՝ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթներին» բառերով,

3) 7-րդ կետի՝

ա) 1-ին ենթակետում «դատախազների թեկնածությունների ցուցակը,» բառերից հետո ավելացնել «այդ թվում՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և այդ ոլորտը համակարգող՝ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակները,» բառերը,

բ) 7-րդ ենթակետում «անցկացվող մրցույթի» բառերից հետո ավելացնել «,ինչպես նաև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և այդ ոլորտը համակարգող՝ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների» բառերը,

գ) 13-րդ ենթակետում «այլ ակտերով» բառերից հետո ավելացնել «իր» բառը,

4) 10-րդ կետի առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ (բացառությամբ գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի)՝ նիստին մասնակցած անդամների կեսից ավելիի կողմ ձայներով, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և այդ ոլորտը համակարգող՝ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների դեպքում՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից այդ մրցույթների անցկացման կարգով սահմանված կարգով:»,

5) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարցազրույցի ձայնագրությունն ու գրավոր արձանագրությունն ունեն միևնույն իրավական ուժը, սակայն հակասության դեպքում առաջնայնությունը տրվում է ձայնագրությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ ձայնագրությունը պատշաճ որակի չէ կամ տեխնիկական այլ խնդիրների պատճառով հնարավոր չէ այն վերարտադրել, որի պարագայում հիմք է ընդունվում գրավոր արձանագրությունը:»,

6) 14-րդ կետում «Հանձնաժողովի անդամի նիստերից պարբերաբար» բառերից հետո ավելացնել «կամ երեք նիստ անընդմեջ» բառերը,

7) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանձնաժողովը կազմված է 9 անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում Արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից

նշանակվող գլխավոր դատախազի 1 տեղակալ, 4 դատախազ և 3 իրավաբան գիտնական, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:»,

8) 16-րդ կետի 7-րդ ենթակետում «իրականացնում է» բառից հետո ավելացնել «օրենքով,» բառը,

9) 18-րդ կետի՝

ա) 2-րդ ենթակետում «իսկ սխալ կամ մասնակի սխալ» բառերը փոխարինել «իսկ սխալ կամ մասնակի ճիշտ» բառերով,

բ) 3-րդ ենթակետում «քվեարկելով կողմ կամ դեմ» բառերից հետո ավելացնել «՝ բառացությամբ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների և այդ ոլորտը համակարգող՝ գլխավոր դատախազի տեղակալի թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթների» բառերը,

գ) 6-րդ ենթակետում «իրականացնում է» բառից հետո ավելացնել «օրենքով,» բառը,

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ